ՊԱՏԻՎ ՈՒՂԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 9(24), 30 Նոյեմբերի, 2019թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՖՈՐՈՒՄ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

2019 թվականի նոյեմբերի 10-ից 15-ը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հանրային անվտանգության համալսարանում անցկացվեց Ոստիկանական կրթական համագործակցության միջազգային ֆորումի գործադիր կոմիտեի առաջին նիստը, որին մասնակցում էին 19 երկրներից 25 ոստիկանական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ: ՀՀ ոստիկանության կրթահամալիրը ներկայացնում էին կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանը և միջազգային համագործակցության և ՏՏ ներդրման բաժնի ավագ տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Է. Կարապետյանը: Միջազգային ոստիկանական 11-րդ ֆորումի բացման հանդիսավոր արարողությանը ողջույնի խոսքով հանդես եկավ Չինաստանի Հանրային անվտանգության համալսարանի նախագահ Ցաո Շիքուան՝ նշելով. «Ոստիկանական կրթական համագործակցության միջազգային ֆորումն ստեղծում է բաց հարթակ, որը նպաստում է ակադեմիական փոխանակումների տարածմանը, մասնագիտական վերապատրաստմանը և միջազգային համագործակցության ամրապնդմանը»:

Ֆորումի շրջանակներում անցկացվեց «Կիբերհանցավորության դեմ պայքար» թեմայով գիտական համաժողով: Համաժողովի ընթացքում տարբեր երկրների ոստիկանությունների ներկայացուցիչներ խոսեցին իրենց երկրներում կիբերհանցավորության զարգացման, հետաքննության, ապացույցների հավաքման, կիբերհանցավորության դեմ պայքարի ուղիների և միջազգային համագործակցության մասին: ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կողմից «Կիբերհանցավորությունը Հայաստանի Հանրապետությունում. արդի իրավիճակը և միտումները» թեմայով զեկույցով ելույթ ունեցավ Էլյա Կարապետյանը:

Ոստիկանական կրթական համագործակցության միջազգային ֆորումի գործադիր կոմիտեի (IFPEC) նիստում ընտրվեց ֆորումի պաշտոնական տարբերանշանը, վերանայվեց 2020-2022 թվականների ընթացքում ֆորումի գործունեության պլանը և որոշվեց 2020թ. հերթական հանդիպումն անցկացնել Պեկինում:

Միջոցառման ընթացքում տեղի ունեցան մի շարք հանդիպումներ: Չինաստանի հանրային անվտանգության համալսարանի փոխնախագահ Քսի Յանլիի հետ հանդիպման ընթացքում չինական կողմը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանին իր պատրաստակամությունը հայտնեց կրեդիտային շարժունության շրջանակներում իրենց բուհում ընդունելու կրթահամալիրի սովորողներին:

Իրանի Իսլամական Հանրապետության Ամինի միջազգային ոստիկանական ակադեմիայի նախագահ Հասան Զավադի Նիականիի նախաձեռնությամբ տեղի ունեցավ հանդիպում կրթահամալիրի պետ Մ. Բաբայանի հետ, որի ընթացքում քննարկվեցին հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր, և համագործակցության ուղղությամբ նախնական համաձայնություն ձեռք բերվեց:

Ուզբեկստանի Հանրապետության ՆԳՆ ակադեմիայի պետ, գեներալ-լեյտենանտ Բախոդիր Մատլյուբովի հետ հանդիպման ընթացքում ևս ուսումնական ծրագրերի համեմատական վերլուծություն (բենչմարքինգ) իրականացնելու համաձայնություն ձեռք բերվեց:

Կրթահամալիրի ներկայացուցիչները երկուստեք հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր քննարկեցին նաև Իտալիայի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի և կանխարգելման միջազգային բարձրագույն դպրոցի նախագահի և Լոնդոնի ոստիկանական քոլեջի նախագահի ղեկավարած պատվիրակության հետ:

Էլյա Կարապետյան
ոստիկանության
ավագ լեյտենանտ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆԸ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԻՆ

Համաձայն ՀՀ նախագահի 2019թգ նոյեմբերի 27-ի ՆՀ-264-Ա հրամանագրի՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ, իրավաբանական գիտությունների թեկնածու Տիգրան Միքայելի Եսայանը նշանակվել է ՀՀ ոստիկանության պետի տեղակալի պաշտոնին:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ամբողջ անձնակազմը շնորհավորում է նորանշանակ փոխոստիկանապետին և մաղթում մասնագիտական ու աշխատանքային նորանոր վերելքներ՝ ի նպաստ Հայաստանի Հանրապետության բարօրության:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՐԹԱԿՆԵՐ

2019 թ. ընթացքում ՀՀ ոստիկանության կրթահամալիրն ավելի մեծ թափով շարունակում է երկկողմ և բազմակողմ սերտ համագործակցությունն օտարերկրյա պետությունների ոստիկանական ուսումնական հաստատությունների և ՀՀ-ում գործող միջազգային կազմակերպությունների հետ:

Այդպիսի համագործակցության դրսևորումներից էր նաև ԱՄՆ դեսպանատան հետ գործընկերային կապը, որի շրջանակում հոկտեմբերին Կրթահամալիրում էին ԱՄՆ դեսպանատան անվտանգության ծառայության պետ Քեվին Թիհանան, դեսպանատան ներկայացուցիչներ Քելլի Սքոթին և Անի Հակոբյանը:

Հանդիպման հիմնական նպատակն էր «Բանավոր պատկերների մեթոդիկայի կիրառումն օպերատիվ-հետախուզական միջոցառումների (ՕՀՄ) իրականացման ընթացքում» թեմայով դասընթացի անցկացումն ու փորձի փոխանակումը:

Դասախոսությունների ընթացքում ԱՄՆ փորձագետները ներկայացրին տարվող աշխատանքները, գրանցված արդյունքները և իրականացված միջոցառումները: Կողմերը նաև քննարկեցին իրականացվող դասընթացների արդյունքները և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

Կրկին հանդիպում նոյեմբերին. այս անգամ Կրթահամալիրում էին ԱՄՆ դեսպանության թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բաժնի իրավական հարցերով ավագ խորհրդատու Ադի Հոլովեյը, ԱՄՆ հետաքննությունների դաշնային բյուրոյի գործակալ Աննա Հակոբյանը և ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության ծրագրի ազգային համակարգող Մարիցա Հովհաննիսյանը:

▶ 2

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՐԹԱԿՆԵՐ

1 ◄

Ադի Հոլովեյը ներկայացրեց «ԱՄՆ պարեկային ոստիկանություն» թեմայով իր դասախոսությունը, որի շրջանակներում պատմեց պարեկային ոստիկանությունում կատարած իր գործունեության, ԱՄՆ-ում պարեկային ոստիկանության կառուցվածքային առանձնահատկությունների, նյութատեխնիկական միջոցների, ուսուցման, աշխատանքի ընդունվելու կարգի, գործառույթների, առաքելության մասին:

Ելույթ ունեցավ նաև Աննա Հակոբյանը, ով «Հետաքննությունների դաշնային բյուրոյի առաքելությունը Հայաստանում» թեմայով դասախոսությամբ ներկայացրեց Հետաքննությունների դաշնային բյուրոյի պատմությունը, գործառույթներն ու առաքելությունը, պատմեց իր աշխատանքային ուղու մասին:

Այս համատեքստում հնչեցին առաջարկություններ, և բանախոսները նշեցին, որ այսպիսի դասախոսությունները ոստիկանության պրակտիկ աշխատանքի կազմակերպման և կատարելագործման ևս մեծ խթան են:

2019թ. տարեվերջյան միջազգային հանդիպումներն այսքանով չեն սահմանափակվում. առջևում դեռ նոր ծրագրեր և նոր հանդիպումներ են:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՏՈՆՈՒՄ ԵՆ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՕՐԸ

Թեպետ նոյեմբերյան տոնացույցն այնքան էլ հարուստ ու գունազարդ չէ, բայց, այնուամենայնիվ, սիրված է ուսանողության կողմից: Իհարկե, ինչպես կասեր ռուս ուսանողը. «Քննություն հանձնելը մեզ համար միշտ էլ տոն է», բայց մենք, ավելի լավ է առանց ավելորդ պաթոսի, տոնենք նոյեմբերի 17-ը՝ Ուսանողների միջազգային օրը: Քչերը գիտեն, որ Ուսանողության միջազգային օրը նշվել է դեռ 1939 թվականի հոկտեմբերի 28-ից. ֆաշիստների կողմից գրավված Չեխոսլովակիայում ուսանողները և դասախոսները դուրս են գալիս փողոց, որպեսզի նշեն Չեխոսլովակիայի պետության կազմավորման (1918-ի հոկտեմբերի 28) տարեդարձը: Սակայն խաղաղ ցույցը ցրվում է զավթիչների կողմից: Այդ իրադարձությունների ժամանակ գնդակահարվում է բժշկական ֆակուլտետի ուսանող Յան Օպլետալը, ում հուղարկավորությունը վերածվում է բողոքի ակցիայի, ձերբակալվում են տասնյակ ուսանողներ: Նոյեմբերի 17-ի վաղ առավոտյան գեստապոյականներն ու էսէսականները շրջապատում են ուսանողական հանրակացարանները: Շուրջ 1200 ուսանող ձերբակալվում և ուղարկվում է Զաքսենհաուզենի համակենտրոնացման ճամբար: Տասնյակ

ուսանողներ ու շարժման ակտիվիստներ բանտում առանց դատի ենթարկվում են մահապատժի: Հիտլերի հրամանով չեխական բոլոր բարձրագույն ուսումնական հաստատությունները փակվում են մինչև պատերազմի ավարտը:

Երկու տարի անց Լոնդոնում տեղի է ունենում ֆաշիզմի դեմ պայքարող ուսանողների միջազգային հանդիպում, որի ժամանակ որոշվում է նոյեմբերի 17-ն ամեն տարի նշել որպես ուսանողի օր՝ ի հիշատակ նահատակ հայրենասեր ուսանողների: 1946 թվականի նոյեմբերի 17-ին Պրահայում ընթացող Ուսանողների համաշխարհային կոնգրեսն այդ օրը հռչակում է Ուսանողության միջազգային օր:

Ուսանողության միջազգային օրվա խորհուրդը փոքր-ինչ տխուր նախաբան ունի, բայց ուսանողները մեծ ոգևորությամբ են այն նշում, քանզի այդ տարիները մարդու կենսագործունեության ամենաակտիվ և ամենահետաքրքիր ժամանակաշրջանն է: Ուսանողը ձեռք է բերում բարձրագույն կրթություն, մասնագիտություն, նոր ծանոթություններ և ընկերներ, շփվում է տարբեր և հետաքրքիր մարդկանց հետ, կատարում ինքնուրույն քայլեր և ըստ իր նախասիրությունների՝ կազմակերպում իր ժամանցը: Այս անփոխարինելի տարիները թողնում են անջնջելի հետք՝ ուսանողին նախապատրաստելով կյանքի տարբեր մարտահրավերների:

Մ. Խերանյան

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ 42 ՏԱՐԵԿԱՆ Է

Հայաստանի ոստիկանությունն անցել է մեծ ու պատասխանատվությամբ լի տատասկոտ ճանապարհ, սակայն անձնուրաց նվիրումով ծառայել է իր պետությանն ու հասարակությանը: Այդ դժվարին ճանապարհին շատ նվիրյալներ են իրենց կյանքը զոհաբերել՝ հանուն օրինակելի հասարակական կարգի ստեղծման ու քաղաքացիների սահմանադրական իրավունքների ապահովման: Պատմական արժեք ներկայացնող այդ պայքարի շատ փաստաթղթեր, դեպքերին առնչվող շատ առարկաներ չեն պահպանվել, իսկ ինչ որ պահպանվել է, գտնվել է կա՛մ արխիվային փաստաթղթերում, կա՛մ առանձին քաղաքացիների մոտ: Ներքին գործերի աշխատակիցների անձնուրաց ու հերոսական անցյալի մասին հիշարժան դրվագներ պահպանելու, հաջորդող սերնդին նրանց օրինակով կրթելու և ոգևորելու համար անհրաժեշտություն առաջացավ թանգարան ստեղծել: Չնայած 1970թ. վերջերին՝ Հայաստանի միլիցիայի հիմնադրման 50-ամյակի տոնակատարության օրերին, հանրապետության ներքին գործերի նախարարը (այն ժամանակ՝ մինիստրը) հրաման արձակեց թանգարան ստեղծելու մասին, սակայն այդ ժամանակ չստեղծվեց: Եվ միայն 1977թ. Հայկական ՍՍՀ ներքին գործերի մինիստրի հրամանով և ՆԳՄ կուսակցական կոմիտեի որոշմամբ ստեղծվեց Հայկական ՍՍՀ ՆԳՄ մարտական և աշխատանքային փառքի թանգարան:

Երևանի միլիցիայի միջնակարգ մասնագիտական դպրոցի շենքում 1977թ. նոյեմբերի 10-ին տեղի ունեցավ Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության ներքին գործերի մինիստրության մարտական և աշխատանքային փառքի թանգարանի բացումը, որը նվիրված էր Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության և սովետական միլիցիայի ստեղծման 60-ամյակին: Ոստիկանության թանգարանի հիմնադրումը ՀՀ ՆԳՆ կյանքում մեծ իրադարձություն էր, այն լայն արձագանք ունեցավ մամուլում և հեռուստառադիոյի եթերում:

Խորհրդային Հայաստանի մշակույթի նախարարությունը 1984թ. թանգարանին շնորհեց «Ժողովրդական թանգարան» պատվավոր կոչում, իսկ 1986թ. մշակույթի արժեքները հավաքելու, պահպանելու և իրազեկելու գործում ունեցած ակնառու հաջողությունների համար պարգևատրեց պատվոգրով:

1994թ. թանգարանը տեղափոխվեց ՀՀ ոստիկանության ուսումնական կենտրոն: ՀՀ ոստիկանության կոլեգիայի հանձնարարությամբ 2010թ. օգոստոսին վերսկսվեցին թանգարանի աշխատանքները: Ոստիկանության կրթահամալիրի կազմավորման կապակցությամբ 2013թ. օգոստոսին, ՀՀ ոստիկանապետի հրամանի համաձայն, թանգարանը վերանվանվեց ՀՀ ոստիկանության պատմության թանգարան և տեղափոխվեց իր նախկին տեղը՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիր:

2015թ. հետևողական աշխատանքներ են կատարվել թանգարանի ֆոնդերի ուսումնասիրման, համալրման և հաշվառման ուղղությամբ: Մշակվել են թանգարանի հիմնական և օժանդակ ֆոնդերը: Դրանց հիման վրա մշակվել է նաև թեմատիկ պլան՝ ըստ որի կատարվել են թանգարանային առարկաների ցուցադրման աշխատանքները:

Վերսկսման աշխատանքներից հետո թանգարան են հաճախել շուրջ 3000 այցելու՝ դպրոցականներ, քաղաքացիներ, սովորողներ, բուհերի ուսանողներ, վետերաններ:

Այսօր ՀՀ ոստիկանության պատմության թանգարանը 42 տարեկան է, և դարձյալ Հանրային ռադիոյի ուշադրության կենտրոնում. «Ժամանակի վկան» հաղորդաշարը հրավիրել էր թանգարանի հիմնադրման ակունքներում կանգնած ոստիկանության վետերան, պաշտոնաթող գնդապետ Ժորա Բարսամյանին և ՀՀ ոստիկանության համակարգում ավելի քան 36 տարի աշխատած, այժմ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի առաջատար մասնագետ,

ոստիկանության պաշտոնաթող գնդապետ Դավիթ Հովսեփյանին, որի պատասխանատվության ներքո են ոստիկանության թանգարանի աշխատանքները:

Նա մեծ նվիրումով է ցուցադրում և լուսաբանում հիմնադրումից ի վեր ՀՀ ոստիկանության անցած ուղու և մեր պետության պատմության, առանձնապես խորհրդային շրջանի կարևոր շրջափուլերը ներկայացնող թանգարանի ցուցանմուշները:

Դ. Հովսեփյանը ոչ միայն ուսումնասիրում, այլև ցուցանմուշների, այդ թվում փաստաթղթերի, արխիվային նյութերի, լուսանկարների մասին համապարփակ տեղեկություններ է տալիս թանգարանի այցելուներին: Թանգարանում ընդգրկված են նաև հրապարակումներ՝ նվիրված հանրապետության ներքին գործերի մարմինների ծառայողներին:

Նա հարցազրույցի ժամանակ անթաքույց հպարտությամբ ներկայացրեց հայոց պատմության ընթացքում՝ առաջին ոստանիկներից սկսած, մինչև մեր օրերի ոստիկանության դերակատարությունը և այդ պատմությունն ամբողջացնող, կրթական, դաստիարակչական նշանակություն ունեցող թանգարանի հիմնադրման կարևորությունն ու անհրաժեշտությունը, որտեղ ամփոփված են ոստիկանության անցած փառավոր ճանապարհի և հանցավորության դեմ ակտիվ ու անձնուրաց պայքարի խոսուն վկայությունները:

Դ. Հովսեփյանը թվարկեց թանգարանի հիմնադրման ակունքներում կանգնած նվիրյալների անունները, որոնք ջանք չեն խնայել հայոց միլիցիայի պատմության նվիրական էջերն անմահացնելու գործում: Նրանք եղել են հանրապետության շատ քաղաքներում և գյուղերում, հանդիպել են վետերանների հետ, ուսումնասիրել արխիվային փաստաթղթերը: Թանգարանի ստեղծման գործում որոշակի աջակցություն է ցուցաբերել ԽՍՀՄ ՆԳՆ կենտրոնական թանգարանը, որը տրամադրել է Հայաստանում սովետական իշխանության հաստատման պատմության, ինչպես նաև միլիցիայի գործունեության վերաբերյալ փաստաթղթերի պատճեններ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրում նոյեմբերի 11-ին տոնական տրամադրություն էր. նշվում էր ոստիկանության պատմության թանգարանի 42-րդ տարեդարձը:

Միջոցառմանը ներկա էին Կրթահամալիրի ղեկավարությունը, ոստիկանության վետերաններ, սովորողներ:

Հանդիսության սկզբում ողջույնի խոսք ասեց թանգարանի առաջատար մասնագետ Դավիթ Հովսեփյանը, որը հանգամանալից ներկայացրեց թանգարանի անցած ուղին, ապա խոսքը փոխանցեց ՀՀ ոստիկանության պաշտոնաթող գնդապետ Ժորա Բարսամյանին, իսկ վերջինս պատմեց թանգարանի ստեղծման վերաբերյալ իր հուշերը, ելույթ ունեցավ նաև թանգարանի նախկին առաջատար մասնագետ, ոստիկանության պաշտոնաթող գնդապետ Արթուր Ծատուրյանը: Միջոցառումն ամփոփեց Կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ Տ. Եսայանը, որն ընդգծեց թանգարանի կարևորությունն ապագա սերունդներին հայրենասեր և պատվախնդիր դաստիարակելու գործում:

Հանդիսությունը վերածվեց գրական ցերեկույթի, երբ Կրթահամալիրի սովորողներն ասմունքեցին Եղիշե Չարենցի, Պարույր Սևակի, Համո Սահյանի բանաստեղծությունները:

Վերջում ոստիկանության պաշտոնաթող գնդապետներ Ժորա Բարսամյանը և Էդիկ Չիբուխչյանն իրենց տպավորությունները գրանցեցին պատվավոր հյուրերի մատյանում:

Միջոցառումը շարունակվեց նաև կրթահամալիրի տարածքում. Կրթահամալիրի ռադիոցանցով հեռարձակվեց ՀՀ հանրային ռադիոյի հաղորդումը՝ նվիրված ոստիկանության պատմության թանգարանի 42 - ամյակին:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ ՀՕՖ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

«Անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների պրոֆիլակտիկա» առարկան ՀՀ ոստիկանության ՕՀԳ և քրեագիտության ամբիոնի կրթական ծրագրերի կարևոր բաղադրիչներից մեկն է: Վերջինիս խնդիրը երեխաներն են, որոնք, լինելով երկրի առաջընթացի, վաղվա առողջ, ճշմարիտ արժեհամակարգի կրող հասարակության բջիջները, դառնալու են պետության հիմնասյուները: Այսօր նրանք կարիք ունեն հոգածության, իրենց տարրական իրավունքների պաշտպանության, ինչը որոշ դեպքերում խաթարվում է տարբեր պատճառներով և դրդում նրանց բացասական ազդեցությունների, վատ միջավայրի տիրույթ, որն էլ ապագայում չի բացառում նրանց հանցագործ դառնալու հավանականությունը: Նրանց մեծ մասն ընտանիք չունեցող, լքված, անապաստան, մուրացկանությամբ զբաղվող կամ բռնության ենթարկված երեխաներ են՝ երբեմն վարքագծի շեղումներով:

ՕՀԳ և քրեագիտության ամբիոնի դասախոսներն առարկայի դասավանդումն առավել արդյունավետ դարձնելու համար փորձում են մշտապես ապահովել կապը խնամքի հատուկ կենտրոններում գտնվող անչափահասների և ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսանողների միջև: Սովորողների ուշադրությունը բևեռվում է այն հանգամանքին, որ ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոնն ապաստան է տալիս մանկահասակներից մինչև չափահասության տարիքի չհասած երեխաների, որոնց տրամադրվում են տարբեր ծառայություններ՝ ոստիկանության 24-ժամյա իրավական և շտապ արձագանքման ծառայություն, բուժօգնություն, հոգեբանական աջակցություն, հակասթրեսային թերապիա, «թեժ գիծ» ծառայությանը կապվելու հնարավորություն և այլն: ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոնի սաները գործնականորեն համոզվում են ոստիկանության աշխատակիցների՝ տվյալ գործընթացում ունեցած առանցքային դերակատարման մեջ:

Երբեմն ՕՀԳ և քրեագիտության ամբիոնն է հյուրընկալում երեխաներին՝ ծանոթացնելով ոստիկանության կրթահամալիրի պատմությանը, կառուցվածքին, գործառույթներին:

Նշենք միայն, որ «Անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների պրոֆիլակտիկա» առարկայի պարապմունքները ՕՀԳ և քրեագիտության ամբիոնի նման կերպ կազմակերպելը և տվյալ կենտրոն այցելելը կրել է պարբերական բնույթ և դարձել ավանդական: Նման պարապմունքներն ավելի հստակ պատկերացում են տալիս ոստիկանության՝ ԱԳ և ԸԲԿ ստորաբաժանումների աշխատակիցների գործունեության և պարտականությունների մասին ու արդեն իսկ հաստատել են իրենց կենսունակությունն ու կարևորությունը:

Ա. Սահակյան
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի ՕՀԳ և քրեագիտության ամբիոնի դոցենտ, ոստիկանության գնդապետ

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՌԴ ՆԳՆ ԱՌԱՋԱՏԱՐ ԲՈՒՀՈՒՄ

Մեծ հեղինակություն վայելող՝ Մոսկվայի Կիկոտի անվան համալսարանում հոկտեմբերի 21-ից 26-ը «Փորձաքրեագիտական ստորաբաժանումների համար կադրերի պատրաստման կազմակերպում» թեմայով որակավորման բարձրացման դասընթաց էր կազմակերպվել, որին մասնակցել են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ներկայացուցիչներ՝ ակադեմիայի ՕՀԳ և քրեագիտության ամբիոնի դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ Բենիամին Ալեքսանյանը և քրեական դատավարության ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության կապիտան Արտակ Ղազարյանը: Այցի ընթացքում կրթահամալիրի ներկայացուցիչները ծանոթացան համալսարանի ուսումնական գործընթացին, առարկայական ծրագրերին, թեմատիկ պլաններին, դասավանդման մեթոդական ուղեցույցներին և նյութատեխնիկական բազային: Մասնագիտական լաբորատորիաներում սեմինար և գործնական պարապմունքներին մասնակցությունը հնարավո-րություն տվեց անմիջականորեն ուսումնասիրել կիրառվող դասավանդման մեթոդիկաների նպատակահարմարությունը:

Բ. Ալեքսանյանին և Ա. Ղազարյանին հնարավորություն ընձեռվեց մասնակցել ԺՏՆՑ-ում կազմակերպված «Պետության անվտանգության ապահովման միջոցներ» խորագրով Interpolitex 13-րդ միջազգային ցուցահանդեսի շրջանակներում անցկացված թեմատիկ քննարկումներին, հանցագործությունների բացահայտմանն ուղղված նորագույն տեխնոլոգիաներին և տեխնիկական միջոցների հնարավորություններին:

Որակավորման բարձրացման դասընթացի մաս կազմեց նաև մասնակցությունը «Դատական փորձաքննությունների շրջանակներում կանխարգելիչ գործունեության տեսական և գործնական հիմնախնդիրները» թեմայով կլոր սեղան - քննարկմանը:

Այցելություն կատարվեց նաև համալսարանի գիտական բաժին, որտեղ աշխատանքների կազմակերպման գործընթացին ծանոթանալուն զուգահեռ քննարկվել են համատեղ գիտական աշխատանքներ կազմակերպելու և իրականացնելու հնարավորությունները, ու ձեռք են բերվել նախնական պայմանավորվածություններ:

Մասնակիցները բարձր են գնահատում որակավորման բարձրացման դասընթացի արդյունքները և ուսումնական գործընթացում ներդնելու նպատակով ձեռնամուխ են եղել դասավանդման մեթոդիկաների վերլուծությանը:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

2019 թվականի նոյեմբերի 15-ին տեղի ունեցավ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ու վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոններին կից գործող պետահրավական առարկաների գիտական խմբակի 2019-2020 ուստարվա երկրորդ նիստը:

Նիստին ներկա էին Կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի պետ, ոստիկանության փոխգնդապետ Ռ. Մարանդյանը, վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնի պետ, ոստիկանության կապիտան Գ. Խուդոյանը, պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ Ա. Սաֆարյանը, վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնի դասախոս, ոստիկանության մայոր Ա.Մարգարյանը, քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի ուսումնական ասիստենտ, ոստիկանության կապիտան Ա. Ադամյանը, գիտական աշխատանքների բաժնի գիտաշխատող, ոստիկանության ավագ լեյտենանտ Ն.Վարդանյանը, ինչպես նաև ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի 1-ին, 4-րդ և վճարովի 2-րդ կուրսերի սովորողները:

Գիտական խմբակի նիստի թեման էր՝ «Համայնքային ոստիկանություն. մարտահրավերներ և խոչընդոտներ»:

Նշված թեմայով գիտական զեկույցով հանդես եկավ վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնի դոցենտ, ոստիկանության գնդապետ Վ.Ավագիմյանը: Նա լուսաբանեց ՀՀ-ում համայնքային ոստիկանության մոդելի ներդրման առանձնահատկությունները, ինչպես նաև առկա հիմնախնդիրների և խոչընդոտների հաղթահարման կապակցությամբ ՀՀ ոստիկանության կողմից իրականացվող անհրաժեշտ կազմակերպչական և իրավական բնույթի միջոցառումները: Գիտական նյութի ներկայացումից հետո զեկուցողն սպառիչ պատասխաններ տվեց մասնակիցների հարցերին:

ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌԴ ՆԳՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

Հարցազրույց Աննա Անուշավանի Ադամյանի հետ, ով 2015-2018թթ. մասնագիտական կրթությունը շարունակել է ՌԴ ՆԳՆ կառավարման ակադեմիայի ադյունկտուրայում /ասպիրանտուրայում/, ստացել դասախոս-հետազոտողի մասնագիտացում և իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

-Բարև Ձեզ, տիկի՛ն Ադամյան, ինչու՞ որոշեցիք Ձեր հետագա կրթությունը շարունակել արտասահմանում և ինչպե՞ս ընտրեցիք տվյալ բուհը:

-Բարև Ձեզ, նախ և առաջ, ասեմ, որ երբ որոշեցի հետբուհական կրթությունս շարունակել, արդեն գերազանցությամբ ավարտել էի Սանկտ-Պետերբուրգի արտաքին տնտեսական կապերի տնտեսագիտության և իրավունքի ինստիտուտի իրավաբանական ֆակուլտետը: Առաջին բարձրագույն կրթությունս ստանալուց հետո պլանավորել էի շարունակել խորացնել իրավաբանական գիտելիքներս, սակայն հանգամանքների բերումով հետաձգվեց: Ընդամենը մի քանի տարի անց դիմեցի ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջն ու բարեհաջող ավարտելուց հետո Արագածոտնի մարզային վարչության Արագածի բաժնում նշանակվեցի ծառայության՝ որպես համայնքային ոստիկան: Ծառայության ընթացքում ՌԴ ՆԳՆ կառավարման ակադեմիայում հետբուհական կրթություն ստանալու վերաբերյալ հեռախոսագիր ստացանք: Որոշեցի օգտվել ընձեռված հնարավորությունից, և անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթն ու պահանջվող ռեֆերատը (մասնագիտական թեմատիկայով) ուղարկվեց Մոսկվա (ՌԴ ՆԳՆ կառավարման ակադեմիա), որտեղից միայն մի քանի ամիս անց մեկնելու և ընդունելության քննություններին մասնակցելու թույլտվություն ստացա: Մեկնեցի Մոսկվա, բարեհաջող հանձնեցի ընդունելության քննությունները (գիտության փիլիսոփայություն և պատմություն, քրեական իրավունք և անգլերեն), ընդունվեցի և վերադարձա հայրենիք: Մեկ ամիս անց կրկին մեկնեցի Մոսկվա և արդեն պաշտոնապես համալրեցի Կառավարման ակադեմիայի ադյունկտների շարքերը:

- Ըստ Ձեզ՝ ինչպիսի՞ կարողություններ և հմտություններ են պետք արտասահմանում հետբուհական կրթություն ստանալու համար:

- Ասեմ, որ ի թիվս այն գիտելիքների և օտար լեզուների իմացության, որոնք անհրաժեշտ են արտերկրում կրթությունը շարունակելու համար, պետք է նաև ունենալ մասնագիտական հմտություններ և բարոյահոգեբանական պատրաստվածություն, ինչը, բնականաբար, մենք ձեռք ենք բերում ոչ միայն բուհերում տեսական գիտելիքներ ստանալով, այլ նաև պրակտիկ գործունեության, հատկապես ոստիկանության տարածքային ստորաբաժանումներում ծառայելով, որը գիտական գործունեությամբ զբաղվելու հիմք է հանդիսանում:

- Ինչպիսի՞ դժվարությունների եք հանդիպել ուսման տարիներին:

Դժվարություններ ասվածը շատ հարաբերական է, քանի որ դա կախված է մարդու հոգեկերտվածքից, էությունից, և այս դեպքում նկարագրել այն ամենը, ինչին հանդիպում ես արտերկրում կրթություն ստանալիս, համարում եմ յուրաքանչյուրի ընկալման և պատկերացման հարցը: Կոնկրետ ինձ համար դա Հայրենիքիս նկատմամբ կարոտն էր, որը մեծ դժվարությամբ կարողացա հաղթահարել՝ յուրաքանչյուր ազգային տոն կամ իրադարձություն փորձելով դարձնել բոլորինը, խոսել ազգիս արժանավոր զավակների ու երկրիս տեսարժան վայրերի մասին: Դա անբացատրելի էր, երբ ամեն անգամ օտար շրջապատում լսում ես Հայաստան անունն ու փշաքաղվում: Փորձում ես ամեն քայլով ու խոսքով ընդգծել հայ լինելդ՝ չնայած որ ոչ միշտ է դա միանշանակ ընկալվում: Սակայն, ի բարեբախտություն ինձ, ես սովորում էի բարձր որակներ ունեցող այնպիսի անձանց և պրոֆեսորադասախոսական կազմի մոտ, ովքեր իրենց գործի վարպետներ են տարածաշրջանում ու նաև աշխարհում, իսկ գիտության ոլորտում՝ «մտքի թելադրողներ», ովքեր միշտ պատրաստակամորեն աջակցում էին թե՛ գիտական և թե՛ ընթացիկ խնդիրները լուծելու հարցում:

- Նշե՛ք այն առավելությունները, որոնք դուք ստացաք արտասահմանում սովորելու ընթացքում:

- Ինչպես արդեն նշեցի, արտերկրում, իսկ ավելի կոնկրետ՝ այն բուհում, որտեղ ինձ կրթություն ստանալու բախտ վիճակվեց, տիրում է այնպիսի մթնոլորտ, որտեղ ամեն անկյունից լսում ես գիտական թեմաներով քննարկումներ, նույնիսկ օդում զգում ես այդ շունչը, ու այդ ամենով անհնար է չապրել ու չոգևորվել:

Պրոֆեսորադասախոսական կազմից՝ ի դեմս իմ գիտական ղեկավարի, ում անմիջական ղեկավարության ներքո ես զգացի, թե ինչպիսին պետք է լինի իսկական մարդը, գիտնականն ու դասախոսը, կարողանում ես վերցնել առավելագույնս շատ գիտելիքներ, իսկ իրենք իրենց հերթին պատրաստակամ են օգնելու դրանք վերածել հմտությունների:

-Ի՞նչ խորհուրդ կտաք ապագա դիմորդներին, ովքեր որոշել են հետբուհական կրթությունը շարունակել արտասահմանում:

-Արտերկրում կրթություն ստանալու ցանկություն ունեցող յուրաքանչյուր մարդ նախ և առաջ պետք է հասկանա, թե ինչ նպատակով է ցանկանում կրթությունը շարունակել արտերկրում, անշուշտ, զինվի գիտելիքներով, որոնք հնարավորություն կտան դուրս գալ դժվար իրավիճակներից: Միանշանակ խորհուրդ կտամ, որ հատկապես բարձր պահեն հայի արժանապատվությունը: Դրանք ամենակարևոր բաներն են, որ յուրաքանչյուր հայ պետք է գիտակցի ու արժևորի, թույլ չտա որևէ կերպ խեղաթյուրել հայի կերպարը: Դա ոչ միայն սեփական անհատականության, այլև ազգի դեմքն ու կերպարը պահելու խնդիր է: Պետք է գիտակցել, որ նույնիսկ մի փոքր սայթաքումը կարող է վարկաբեկիչ լինել, քանզի դու օտար երկրում ներկայացնում ես սկզբում քո Ազգը, հետո միայն ինքդ քեզ:

-Շնորհակալություն հետաքրքիր հարցազրույցի համար:

- Ես եմ շնորհակալ:

Հարցազրույցը վարեց
Տիգրան Խաչատրյանը

ՊԱՏՎԱԲԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

Գտի՛ր նպատակ, միջոցներ միշտ կգտնվեն
(Գանդի)

Նպատակն այն արդյունքն է, որ մարդը պատկերացնում է, պլանավորում և պարտավորվում հասնել ցանկալի վերջնակետի:

Անհատը ոչ միայն պետք է ունենա նպատակ, այլ նաև պետք է կարողանա կառավարել նպատակները, ճշգրիտ իմանա, թե ինչի է ուզում հասնել, պարզել՝ ինչի վրա պետք է կենտրոնանալ, ինչպես սկսել կամ սկսածը բարելավել:

Դեռ դպրոցական նստարանից որոշեցի դառնալ ոստիկան՝ դույզն-ինչ չպատկերացնելով անգամ այդ մասնագիտության առանձնահատկությունները և դժվարությունները: Սակայն պարզ գիտակցում էի, որ բարդ ու դժվար նպատակները կենտրոնացում, աշխատասիրություն և ջանքեր են պահանջում: Գիտեի նաև, որ նպատակներին հասնելուն նպաստում է մարդու հավատի չափը: Սակայն միամտություն կլինի կարծել, թե միայն մեծ հավատը բավարար է երազանքները կյանքի կոչելու համար: Երազանքները նպատակներ են դառնում, եթե ինքդ քեզ ճանաչելով, քեզ վերահսկելով՝ ամենօրյա տքնաջան աշխատանքի արդյունքում քեզ քայլ առ քայլ մոտեցնում ես նպատակների իրականացման վերջնակետին:

Եվ ահա ավարտելով հիմնական դպրոցը՝ դիմեցի ՀՀ ոստիկանության կրթահամալիր, որի մասին բազմիցս լսել էի իմ ավագ ընկերներից: Բարեհաջող հանձնեցի քննությունները և սրտի անհանգիստ թրթիռով սպասում էի, թե երբ կհամարվեմ Կրթահամալիրի սան և նրա պատերի ներքո կերդվեմ պատվով կրել համազգեստն ու բարձր պահել ոստիկանի պատիվն ու արժանապատվությունը:

Այժմ, երբ ես Կրթահամալիրի քոլեջի առաջին կուրսի սովորող եմ, համոզված եմ, որ նպատակներին հասնելու և ճանապարհը մինչև վերջ պատվով անցնելու համար պետք է լինել համառ, աշխատասեր և ողջ հոգով հավատալ քո նպատակին: Ես հավատացի և այրեցի բոլոր հետդարձի կամուրջներն իմ հետևից, որպեսզի ունենամ ընտրության ընդամենը մեկ տարբերակ:

Երջանիկ եմ, որ հավատացի սեփական ուժերիս, ունեցա ուժեղ կամք և մեծ հավատ: Հետևաբար, պատիվ ունեմ ասելու՝ հպարտ եմ ու երիցս երջանիկ, որ այսօր արդեն Կրթահամալիր կոչվող «մոլորակի» լիիրավ ու պատվարժան քաղաքացին եմ:

Նուշիկ Բաբայան
ոստիկանության
կրտսեր սերժանտ

ԻՆՁ ԳՆԴԱԿ ՉԻ ԴԻՊՉԻ...

«Գրում եմ ձեզ Հունգարիայից: Բա՛, այդպիսի հետաքրքիր բան է բանակը. ամբողջ աշխարհն ես պտտվում, այստեղ շատ լավ է: Այստեղ շոգ չէ, ամենաշատը՝ 30 աստիճան, ամբողջ շրջապատն անտառներ են, զորամասը գտնվում է տուրբազաների մոտ, մեզ մոտ առողջարան էլ կա: Այստեղ առաջին օրը տեղացիները մեզ ձմերուկի մուրաբա հյուրասիրեցին. առաջին անգամ էի ուտում, շա՜տ դուրս եկավ: Ասում են՝ հունգարացիները խաղողի լավ գինի են սարքում, հնարավորության դեպքում դա էլ կփորձեմ ու կգրեմ»,- բայց Վարդանը սա գրում էր Աֆղանստանից, որտեղ խորհրդային զորքերը պատերազմի մեջ էին:

Նամակի բովանդակությունը տպավորություն է ստեղծում, որ հեղինակը գնացել է շրջագայության և նկարագրում է իր հաճելի տպավորությունները, բայց արի ու տես, որ Վարդանը պատերազմում է: Նա կարծես կանխազգում էր, որ հայ ժողովրդին մի քանի տարի անց սպասվում էր իր պատերազմը, որ լինելու էր նույնքան դաժան ու արյունալի:

Տիկին Զարիկը հիշում ու հպարտությամբ պատմում է կորցրած որդու մասին:

«Վարդանը ծնվել է 1966 թվականի մարտի 8-ին Մարգարյան հիվանդանոցում: Բժիշկը մոտեցավ և խնդրեց, որ թույլ տամ գրել մարտի 9, քանի որ Խորհրդային Միության ժամանակ մարտի 8-ը բուռն էին նշում: Հայրը շուտ էր մահացել. միայնակ դաստիարակեցի: Երեխաներիս դաստիարակել եմ այնպես, որ մարդ լինեն, չարիք չլինեն ոչ մեկի համար, մի կտոր հացը կիսեն, օգնեն ընկածին: Խիստ մայր եմ եղել»,-ասաց նա:

Դեռ օրորոցում Վարդանի գլխավերևում կախված էր Չարենցի նկարը. Չարենցով է դաստիարակել որդուն:

Վարդանի լեզուն երբ բացվել է, հարցրել են՝ Վարդա՛ն, ինչո՞ւ մահացավ Չարենցը, ասել է՝ մահացավ, որովհետև մեր հողերը չտվեցին:

Դպրոցը գերազանց է ավարտել: Լավ իմանալով իր ազգի, ժողովրդի պարտություններն ու հաղթանակները, զգալով, որ իր ազգին զինվոր է պետք՝ դիմել է, որ իրեն ուղարկեն Աֆղանստան:

Նա հայտարարել է. «Դարավոր թշնամի ունենք, զինվոր չունենք: Ուր էլ գնամ, տուն եմ գալու,մա՛յր, դու չես լացելու, ես չեմ ծխելու...»:

Մայրը փորձել է համոզել, որ պատերազմ չգնա, սակայն չի կարողացել: Պատերազմից վերադարձել է Կարմիր աստղով՝ օտարի հողում հերոսացած և թշնամուց էլ Դուշման մականունը վաստակած:

«Աֆղանստան ծառայելու գնացի կամավոր, ուզում էի լավ կռվել սովորել և կռվեցի: Վատ զինվոր չեմ եղել և միշտ հավատացել եմ, որ մի օր հայոց բանակի զինվոր եմ լինելու»:

Զորացրվելուց հետո Վարդանն ընդունվում է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետ:

Կենսագրական այս էջը մտովի թերթելիս տիկին Զարիկը դողդոջուն մատներով հանեց մի թերթիկ և սկսեց կարդալ. դա Վարդանի՝ ընդունելության քննությունների ժամանակ հայոց լեզվից գրված շարադրությունն էր՝ «Իմ սիրած կինոնկարը» թեմայով:

«Երանի այն մարդուն, ով հայրենի հողի փրկության համար կնահատակվի»,- այսպես էր ավարտել իր շարադրությունը Վարդանը՝ կարծես մարգարեաբար կռահելով իր վախճանը:

1988 թվական, Արցախյան շարժում. Դուշմանն ամբողջապես նվիրվում է ժողովրդի ազատագրական շարժմանը: Նա մասնակցում է Երասխավանի, Շահումյանի, Ասկերանի շրջանների ինքնապաշտպանության մարտերին, Կրկժանի, Մալիբեյլիի, Լեսնոյի, Խոջալուի, Շուշիի, Բերդաձորի և Լաչինի ազատագրմանը: Շուշիի ազատագրումից հետո մտերիմները պատմում են, որ երկար որոնեցին, հետո Վարդանին գտան հայկական գերեզմանոցում: Նա շամպայնը բացել և լցնում էր հին գերեզմանաքարերին. «Մե՛ր պապեր, Շուշին ազատագրված է, հանգստացե՛ք»:

«Ես պատերազմին շատ եմ պետք, ինձ գնդակ չի դիպչի, իսկ եթե զոհվեմ, միայն դավադիր ականից կլինի»:

Այդպես էլ եղավ. 1992 թվականի հուլիսի 3-ին Արցախի Մյուրիշեն գյուղի մոտ դավադիր ականից ընկավ Դուշմանը...

«Եթե զոհվեմ, զինված, մաքուր հագնված կգաք թաղմանս ու գլխիս տակ դաշույն կդնեք, որ էն աշխարհում էլ պայքարեմ...»:

Վերջումգ «Իմ պատերազմում կանայք ու երեխաներ չպե՛տք է զոհվեն: Եթե թուրք մանուկը մեծանա ու նորից զենք վերցնի, ի՞նչ է պատահել որ, այդ ժամանակ իմ որդին զենք կվերցնի...»:

Մարիետա Խերանյան
ոստիկանության ավագ լեյտենանտ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐՈՆՔ

ԻՆՁ ԽԵ՛ԼՔ ՏՎԵՔ

Ինձ խե՛լք տվեք,
Որ էլ երբեք չապավինեմ ես այս թախտին,
Որ կարճ կյանքս ճոխ վախճանով
չարժևորեմ:

Ինձ խե՛լք տվեք՝
Գոնե հիմա անտեր սիրտս թող պճնված
խելքիս հաղթի,
Լույսին գնամ, լուսավորվեմ, լույսին
սիրեմ:

Ինձ խե՛լք տվեք,
Որ երբ վառվեմ, ինձ պես այրվող հրդեհ
գրկեմ,
Ոչ թե ժպտամ, միջիս ջրով ես ինձ մարեմ:

Ինձ խե՛լք տվեք,
Որ երբ շոգ է, պաղ աղբյուրի ջրով
հարբեմ,
Անմեղ, անխելք ու մորեմերկ՝ ջրում
սուզվեմ,
Ոչ թե ծգված ու կարևոր ցուցամատս
ջրում թրջեմ,
Ինքնահավան սև փողկապիս փոշին
մաքրեմ:

Ինձ խե՛լք տվեք,
Որ երբ նեղվեմ, դժվար լինի,
Իմոնց գրկեմ ու նրանցով ճամփես
հարթեմ,
Ճանապարհն էլ որ ի վերջո ինձ տուն
տանի,
Ոչ թե օտար խելոքներին ապավինեմ:

Ինձ խե՛լք տվեք,
Որ երբ պետք է, դառնամ անխելք
Եվ անտեսեմ սրտիս տիրած այն
պատրանքը,
Որ փակել է և՛ մուտք, և՛ ելք:

Ինձ խե՛լք տվեք,
Եվ հասկանամ գոնե հիմա,
Որ մերժում եմ ամեն մի խելք.
Մտքինս՝ ձեզ, ինձ սրտինս կուզեմ մնա,
Լինեմ ոչ թե անսիրտ գիտուն, այլ,
հիրավի, սրտով անխելք:

Մուշեղ Բաբայան
ՀՀ ոստիկանության
կրթահամալիրի պետ,
ոստիկանության գեներալ-մայոր

ԱՇՆԱՆԱՅԻՆ

Մաղում է մեղմ անձրևը
Մառախլապատ երկնքից,
Ու լցվում է մաքրությամբ
խաղաղ երկինքը նորից:
Անդադար է անձրևը,
Կարծես գալու է հավերժ,
Ու՞ր է գաղթել արևը՝
Հրագունդը մեր անշեջ:
Այգին տերև է լացում,
Շղթա կազմած օրերը
Անցնում են, անցնում:

Լուսյա Գևորգյան
իրավագիտության ֆակուլտետ, 1-ին կուրս

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՀԱՐՑԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

1. 2012 թվականի ամռանը Լոնդոնի երաժշտական տաղավարներից մեկում կենդանի նվագախումբը ձայնագրել է 204 երաժշտական կոմպոզիցիա: Ի՞նչ կոմպոզիցիաներ էին դրանք:
2. Միխայիլ Ժվանեցկին ասել է. «Եթե գեղանկարիչը լավն է, ապա դուք նայում եք նրա նկարած գեղեցկուհուն: Իսկ եթե գեղանկարիչը հանճար է, ապա ...: Ավարտե՛ք Ժվանեցկու միտքը:
3. Կոնֆուցիոսն ասել է. «Եթե Ձեր պլանը մեկ տարվա համար է, բրի՛նձ ցանեք: Եթե Ձեր պլանը տասնամյակների համար է, ծառե՛ր տնկեք: Իսկ եթե Ձեր պլանը ամբողջ կյանքի համար է, ...: Ավարտե՛ք Կոնֆուցիոսի միտքը:

Պատասխաններ

1. 2012 թվականի դեկտեմբերի 31-ին ներկայացված 204 երաժշտական կոմպոզիցիաներ՝ Ամերիկյան ռոքի, ռեգի, ռեգի-ռոքի, ռեգի-ռոքի-ռեգի, ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի, ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի, ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի, ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի, ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի, ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի, ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի, ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի, ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի, ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի, ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի, ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի, ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի, ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի, ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի, ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի, ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի, ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-ռեգի-ռոքի-